



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« »

2018 թ.

N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթեյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (Պ-245-26.01.2018-ՖՎ-011/0 և Պ-245¹-26.01.2018-ՖՎ-011/0) փաթեթի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի փետրվարի 26-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 178 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽ-
ՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆ-
ՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Պ-245-26.01.2018-ՖՎ-011/0 ԵՎ Պ-245-
26.01.2018-ՖՎ-011/0) ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի նիստի N 54 արձանագրության 61-րդ կետով հավանության է արժանացել Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտների բարեփոխումների հայեցակարգը, որի շրջանակներում նախատեսվում է մշակել ոլորտների կարգավորման նոր օրենսդրական նախագծերի փաթեթ: Նախագծերում, ի թիվս այլ հարցերի, նախատեսվում է անդրադառնալ նաև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման առնչվող հարցերին: Ներկայացված Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը չեն հակասում վերոնշյալ հայեցակարգի ընդհանուր տրամաբանությանը:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծերի հիմնական նպատակը հրապարակման ենթակա ֆինանսական հաշվետվությունների հասանելիության ապահովումն է շահագրգիռ անձանց և այլ օգտագործողների համար, առաջարկում ենք խնդրի առավել արդյունավետ լուծման նպատակով փոփոխություններ կատարել ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ձևերում: Ներկայումս կազմակերպությունները կարող են հրապարակել իրենց ֆինանսական հաշվետվությունները մամուլում, ինտերնետով կամ տարածել գրքույկների ձևով: Առաջարկում ենք հստակեցնել վերը նշված պահանջը՝ սահմանելով, որ ֆինանսական հաշվետվությունները հրապարակվեն կա՛մ կազմակերպությունների ինտերնետային կայքերում, կա՛մ <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Միաժամանակ առաջարկում ենք ֆիզիկական և իրավաբանական անձանց համար սահմանել հնարավորություն, անհրաժեշտության դեպքում, դիմումի հիման վրա ստանալ կա՛մ ֆինանսական հաշվետվություններն

Էլեկտրոնային տարբերակով կա՛մ ֆինանսական հաշվետվությունների հրապարակման
Էլեկտրոնային հղումը:

Անհրաժեշտ ենք համարում նաև՝

1) նախագծերում հստակեցնել այն կազմակերպությունների շրջանակը, որոնց
ֆինանսական հաշվետվությունները ենթակա են տրամադրման դիմումի հիման վրա.

2) իրավաբանական անձանց համար նույնպես սահմանել առաջարկվող
ընթացակարգով ֆինանսական հաշվետվություններ ստանալու հնարավորություն:

Միաժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել նաև, որ «Վարչական իրավախախ-
տումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ
և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսված տու-
գանքների չափերը բավականին խիստ են սահմանված, ըստ էության պատժիչ բնույթ են
կրում, և տանում են դեպի քրեական պատասխանատվություն: Մասնավորապես, օրենս-
գրքի 169¹²-րդ հոդվածի 1-ին մասն օրենքով սահմանված դեպքերում և ժամկետներում
ֆինանսական հաշվետվությունները պետական մարմիններ չներկայացնելու կամ դրանք
օրենքով սահմանված կարգով և ժամկետներում չհրապարակելու համար նախատեսում
է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի *հինսասպարիկի*
չափով, մինչդեռ նախագծով առաջարկվում է խստացնել օրենսգրքի 169¹²-րդ հոդվածի 2-րդ
մասով սահմանված սանկցիայի չափը՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապա-
տիկից դարձնելով հազարապատիկ: Բացի դրանից՝ նախագծի 1-ին հոդվածով նոր՝
«Օրենքով սահմանված դեպքերում և ժամկետներում պետական մարմիններ ներկա-
յացված և հրապարակված ֆինանսական հաշվետվությունը քաղաքացու դիմումի հիման
վրա չտրամադրելը» վարչական իրավախախտման համար միանգամից խիստ՝
նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով տուգանք է սահմանում,
ինչը հիմնավորման կարիք ունի: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ,
որ վարչական տույժի նպատակը պատժելը չէ: Վարչական պատասխանատվությունը,

որպես իրավախախտի նկատմամբ ներգործության միջոց, ունի իրավախախտին դատախարակելու, ինչպես նաև վարչական իրավախախտումները կանխելու նպատակ: Այդ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է, որ վարչական պատասխանատվության միջոցը բխի համաչափության սահմանադրական սկզբունքի էությունից, այսինքն՝ լինի բավարար և համաչափ՝ իր նպատակին ծառայելու համար: Նշվածից ելնելով՝ գտնում ենք, որ, ցանկացած հակաիրավական արարքի համար պատասխանատվության միջոց ու չափ նախատեսելիս, նախ և առաջ անհրաժեշտ է համոզվել, որ դրանք հնարավորություն են տալու հասնելու վարչական պատասխանատվության նպատակների իրականացմանը: Հիշյալ դիտողությունը բխում է նաև Հայաստանի Հանրապետության Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի ՆԿ-96-Ա կարգադրության 5.6-րդ կետից, որի համաձայն մշակված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության նոր օրենսգրքի նախագիծը գտնվում է վերջնական լրամշակման և ամփոփման փուլում: Հիշյալ նախագծի հիմքում դրված է նաև սանկցիաների համաչափության սկզբունքը և այդ առումով առաջարկվող սանկցիաներն անհրաժեշտ է դիտարկել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության նոր օրենսգրքի նախագծի հայեցակարգային մոտեցումների և առաջարկվող իրավակարգավորումների շրջանակներում:

Վերը նշվածի հիմքերով առաջարկում ենք՝

1. «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի առաջին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 1. «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-515-Ն օրենքի 24-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Կազմակերպությունները, որոնց ֆինանսական հաշվետվություններն օրենքին համապատասխան ենթակա են հրապարակման, ֆինանսական հաշվետվությունները հրապարակում են իրենց ինտերնետային կայքում կամ <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ մասով.

«3. Կազմակերպություններն օրենքով հրապարակման ենթակա ֆինանսական հաշվետվությունների էլեկտրոնային տարբերակը կամ ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ինտերնետային կայքի հղումը (հասցեն) տրամադրում են ֆիզիկական կամ իրավաբանական անձանց՝ այդ մասին ֆիզիկական կամ իրավաբանական անձի դիմումն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:»:

2. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի առաջին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի 169¹²-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 169¹². Պետական մարմիններ ֆինանսական հաշվետվությունները չներկայացնելը կամ դրանք չհրապարակելը կամ ֆիզիկական կամ իրավաբանական անձի դիմումի հիման վրա ֆինանսական հաշվետվությունները կամ դրանց հրապարակման ինտերնետային կայքի հղումը (հասցեն) չտրամադրելը

Օրենքով սահմանված դեպքերում և ժամկետներում ֆինանսական հաշվետվությունները պետական մարմիններ չներկայացնելը կամ դրանք օրենքով սահմանված կարգով և ժամկետներում չհրապարակելը կամ ֆիզիկական կամ իրավաբանական անձի դիմումի հիման վրա ֆինանսական հաշվետվությունները կամ դրանց հրապարակ-

ման ինտերնետային կայքի հղումը (հասցեն) օրենքով սահմանված կարգով և ժամկետներում չտրամադրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

Տուգանքի նշանակման օրվանից հետո՝ երեսուն օրվա ընթացքում, ֆինանսական հաշվետվությունները պետական մարմիններ չներկայացնելը կամ դրանք օրենքով սահմանված կարգով չհրապարակելը կամ ֆիզիկական կամ իրավաբանական անձի դիմումի հիման վրա ֆինանսական հաշվետվությունները կամ դրանց հրապարակման ինտերնետային կայքի հղումը (հասցեն) օրենքով սահմանված կարգով և ժամկետներում չտրամադրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:»:

Բացի դրանից՝ հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի կանոնները՝

1) «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի՝

ա. 1-ին հոդվածում «կետով» բառն անհրաժեշտ է փոխարինել «մասով» բառով, իսկ «տպագիր» բառը՝ «թղթային» բառով,

բ. 2-րդ հոդվածում «հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը» բառերն անհրաժեշտ է փոխարինել «հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը» բառերով.

2) «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝

ա. 1-ին հոդվածի պարբերությունների համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջներին,

բ. 2-րդ հոդվածում «հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը» բառերն անհրաժեշտ է փոխարինել «հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը» բառերով:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 փետրվարի 2018 թվականի N 178 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Դավիթ Անանյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (Պ-245-26.01.2018-ՖՎ-011/0 և Պ-245¹-26.01.2018-ՖՎ-011/0) փաթեթը քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից գեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2018 թ. փետրվարի 26
Երևան



Պ-245-26.01.2018-ՖՎ-011/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌԽԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-515-Ն օրենքի 24-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2.1-ին կետով.
«2.1. Ֆինանսական հաշվետվությունները տրամադրվում են քաղաքացիներին էլեկտրոնային կամ տպագիր տարբերակով՝ այդ մասին քաղաքացու դիմումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Պ-245՝-26.01.2018-ՖՎ-011/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆԵ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի 169¹²-րդ հոդվածի վերնագիրը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«Հոդված 169¹². Պետական մարմիններ ֆինանսական հաշվետվությունները չներկայացնելը կամ դրանք չհրապարակելը կամ քաղաքացու դիմումի հիման վրա դրանք չտրամադրելը»:

Նույն հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«Տուգանքի նշանակման օրվանից հետո՝ երեսուն օրվա ընթացքում, ֆինանսական հաշվետվությունները պետական մարմիններ չներկայացնելը կամ դրանք օրենքով սահմանված կարգով չհրապարակելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:»:

Նույն հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով.

«Օրենքով սահմանված դեպքերում և ժամկետներում պետական մարմիններ ներկայացված և հրապարակված ֆինանսական հաշվետվությունը քաղաքացու դիմումի հիման վրա չտրամադրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հաշվապահական հաշվառման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասի» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ եվ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի կարգավորումներով խոշոր կազմակերպությունները պարտավոր են հրապարակել իրենց ֆինանսական հաշվետվությունները մամուլում, ինտերնետով կամ տարածել գրքույկների ձևով: Սույն պարտավորությունը չկատարելը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169¹² հոդվածի ուժով առաջացնում է տուգանքի նշանակում նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, ապա տուգանքի նշանակումից հետո երեսուն օրվա ընթացքում, ֆինանսական հաշվետվությունները պետական մարմիններ չներկայացնելը կամ դրանք օրենքով սահմանված կարգով չհրապարակելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով: Արդյունքում խոշոր կազմակերպությունները հնարավորություն են ստանում հինգ հարյուր հիսուն հազար դրամ վճարելով անտեսել օրենքի նշյալ պահանջը՝ չհրապարակելով ֆինանսական հաշվետվությունները:

Խնդիրը հատկապես շոշափելի է դառնում նաև այն ժամանակ, երբ հաշվետվությունը հասանելի չի լինում շահագրգիռ կողմերի/անձանց համար: Կազմակերպությունները հաճախ մերժում են տրամադրել իրենց ֆինանսական հաշվետվությունները: Խնդիրը առավել առարկայական է գրքույկներով տպագրված ֆինանսական հաշվետվությունների պարագայում, երբ պատճառաբանվում է, որ ամբողջ տպաքանակը բաժանված է: Սա խոչընդոտ է հանդիսանում ֆինանսական հաշվետվությունների հասանելիությանը, ինչպես նաև քաղաքացիներին հաշվետվություններ չտրամադրելը հակասում է կազմակերպության ֆինանսական հրապարակայնության համընդհանուր սկզբունքներին, իսկ ներկայիս օրենսդրական կարգավորումներով որևէ իրավական կամ շոշափելի ֆինանսական հետևանք չի առաջանում:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Սույն նախագծերով առաջարկվում է պարտավորեցնել խոշոր կազմակերպություններին քաղաքացիների դիմումի հիման վրա ֆինանսական հաշվետվություն տրամադրել դիմումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Առաջարկվում է նաև խստացնել պատիժը պետական մարմիններ ֆինանսական հաշվետվությունները չներկայացնելու կամ դրանք չհրապարակելու համար՝ համաձայն օրենքի, ինչպես նաև սահմանել խիստ պատիժ շահագրգիռ կողմերին հաշվետվությունները օրենքով սահմանված կարգով չտրամադրելու համար:

3. Ակնկալվող արդյունքը

Օրինագծերի ընդունումը կնպաստի խոշոր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների հրապարակայնացմանը և հասանելիությանը: Մինչույն ժամանակ սույն նախաձեռնությամբ խոշոր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների հրապարակայնացումը կստանա առարկայական բովանդակություն, չի կրի ձևական բնույթ և հասանելի կլինեն շահագրգիռ կողմերի ուսումնասիրությունների համար, ինչը իր հերթին կնպաստի ՀՀ ներդրումային դաշտի ուսումնասիրման մեխանիզմների զարգացմանը: Համեմատական վերլուծությունները նաև հնարավորություն կտան բացահայտելու կազմակերպությունների ընթացիկ վիճակը, դիտարկելու խոշոր կազմակերպությունների գործունեությունը Հայաստանի տնտեսական իրողությունների պայմաններում և հնարավորություն կընձեռեն օբյեկտիվ հարցադրումների և եզրակացու-

թյունների համար: Սա նաև կնպաստի կորպորատիվ արժեթղթերի շուկայի աշխուժացմանը: